ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2016 թվականի **թիվ 21** քաղ. Մոսկվա

5 000 կՎտ-ից ավելի, բայց 50 000 կՎտ-ից ոչ ավելի հզորությամբ գազատուրբինների մասերի առնչությամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի՝ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Երկարաձգել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 86 որոշմամբ սահմանված՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի՝ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) գործողության ժամկետը ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8411 99 001 9 ծածկագրով դասակարգվող 5 000 կՎտ-ից

ավելի, բայց 50 000 կՎտ-ից ոչ ավելի հզորությամբ գազատուրբինների մասերի առնչությամբ՝ մաքսային արժեքի 0 տոկոսի չափով՝ մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամկետով։

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) 21Դ ծանոթագրության մեջ «մինչեւ 01.09.2016–ը ներառյալ» բառերը փոխարինել «մինչեւ 31.12.2021-ը ներառյալ» բառերով։

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան